1700-ԱՄՅԱԿ

1700-ԱՄՅԱԿԻՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 600-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բովանդակ հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի տոնախմբում է քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը: Հայ սփյուռքի անբաժան մասը կազմող ռումինահայ թեմը ուրախությամբ և հպարտությամբ տոնում է ևս մեկ ուրիշ նշանավոր իրադարձություն՝ առաջնորդական թեմի հաստատման 600-ամյակը:

Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը և պրն Իոն Իլիեսկուն Քոթրոչեն պալատում

Թեմական առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի հրահանգով, 2001 թ. ռումինահայ մշակութային կյանքի բոլոր հանդիսությունները նվիրվեցին այս երկու պանծալի հոբելյաններին:

Բուխարեստի հայ մշակույթի տանը կազմակերպվեցին հոգևոր համերգներ, նկարչական ցուցահանդեսներ, գրքերի ցուցադրություններ և այլն: Հատկապես մեծ նշանակություն ունեցան ռումինացի գիտնականների, պատմաբանների, գրողների հանդիպում-դասախոսությունները հայ համայնքի անդամների հետ: Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, ընկերակցությամբ թեմական խորհրդի անդամների, Քոթրոչենի պալատում ընդունվեց Ռումինիայի նախագահ պրն Իոն Իլիեսկուի կողմից: Սրբազանը հանդիպման ընթացքում ներկայացրեց այս տոնախմբությունների կարևորությունը և մանավանդ Ալեքսանդր Բարի ռումինացի իշխանի 1401 թ. հրովարտակը, որը ռումինահայ առաջնորդական թեմի ծննդյան վկայականն է: Պրն Իլիեսկուն հայտնեց, որ ռումինացի ժողովուրդը, պետությունը և Եկեղեցին իրենց մասնակցությունը պիտի բերեն այս տոներին:

Առաջին կարևոր տոնախմբությունը եղավ օգոստոսին Սուչավա քաղաքում: Իրենց մասնակցությունը բերեցին Մշակույթի և կրոնից նախարար պրն Ռըզվան Թեոդորեսկուն, նահանգապետեր, քաղաքապետեր, պատմական հուշարձանների և մշակույթի կոմիտեի անդամներ: Ռումինիայի Հանրապետության նախագահի հրահանգով քաղաքի նահանգապետը և մշակույթի ու հուշարձանների կոմիտեն Սուչավան զարդարել էին այս տոնակատարությունների ազդագրերով:

Ռումինահայ թեմի կազմավորման 600-ամյակին նվիրված տոնախմբությանն իր մասնակցությունը բերեց Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը: Ժամանեցին բազմաթիվ հյուրեր Ռումինիայի տարբեր քաղաքներից և արտասահմանից՝ Ֆրանսիայից, Ամերիկայից և անգամ Բրազիլիայից: Շաբաթ երեկոյան, 11 օգոստոս, Սուրբ Խաչ եկեղեցու մեջ տեղի ունեցավ Հսկումի արարողություն: Ողջույնի խոսքեր ասացին երկու Սրբազանները, որին հետևեցին մատաղի օրհնությունը և պատրաստությունը: Այս արարողությանը մասնակցեցին թե՛ հայ, և թե՛ ռումինացի ուխտավորներ:

Կիրակի, 12 օգոստոս. առավոտյան սկսվեց Սուրբ Պատարագի արարողությունը: Սրբազաններ Տիրայր Մարտիկյանը և Գրիգորիս Բունիաթյանը, շրջապատված պետական ու պաշտոնական անձնավորություններով, որոնց թվում էին Ռումինիայում ՀՀ լիազոր դեսպան տիկին Կարինե Ղազինյանը, Սուչավայի Ռումինական Եկեղեցու առաջնորդ Պիմեն արքեպիսկոպոսը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաև հոգևոր հայր Զոլտան Ալբուն մասնակցեցին Պատարագի արարողությանը: Այդ ընթացքում առաջնորդ Տիրայր Սրբազանը հատուկ աղոթքով հիշատակեց Ռումինիայի հայոց թեմի նախորդ 40 առաջնորդների անունները: Սուրբ Պատարագի ընթացքում Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը կարդաց Վեհափառ Հայրապետի շնորհավորական սրբատառ կոնդակը Ռումինիայում հայոց թեմի հաստատման 600-ամյակի առիթով: Պաշտոնական անձերը ունեին կոնդակի ռումիներեն թարգմանությունը և ուշադրությամբ հետևում էին կոնդակի հայերեն օրինակի ընթերցմանը: Դրանից անմիջապես հետո Ս. Սեղան բարձրացավ Սուչավայի Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Պիմեն արքեպիսկոպոսը և

կարդաց Ամենապատիվ Թեոկտիստ Պատրիարքի, ինչպես նաև Մոլդովայի առաջնորդ Դանիել միտրոպոլիտի ողջույնի խոսքերը հանդիսության առիթով: Պատարագի երաժշտական մասը կատարեց Բուխարեստի հայոց առաջնորդարանի երգչախումբը: Հավարտ Սուրբ Պատարագի վանքի ուխտավորների սրահում ռումինացի և հայ հավատացյալներին մատուցվեց մատաղ և հրավիրվեցին սիրո սեղանին մասնակից դառնալու: Պաշտոնական հյուրերին իրենց հատկացված շենքի առանձին սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ: Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին, հայոց առաջնորդական նախկին նստավայր Զամքայի հռչակավոր պատմական վանքի բակում տեղի ունեցավ հոգևոր համերգ: Ելույթներ ունեցան Բուխարեստի հայոց առաջնորդարանի, Սուչավա քաղաքի օրթոդոքս եկեղեցու քահանա հայրերի և ռումինական ժողովրդական երգերի երգչախմբերը:

Երկուշաբթի՝ Օր Մեռելոց. Բոլոր հայ ուխտավորների ներկայությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարվեց, ուր առաջնորդ Տիրայր Սրբազանը կրկին հիշատակեց ռումինահայ թեմի նախկին 40 առաջնորդների անունները:

1700 և 600-ամյակներին նվիրված հանդիսությունները Սուչավայից տեղափոխվեցին Բուխարեստ: Սեպտեմբեր 4-ին Քոթրոչեն նախագահական պալատի համերգային սրահում տեղի ունեցավ հոգևոր երաժշտության համերգ՝ երկրի նախագահ պարոն Իոն Իլիեսկուի հովանավորությամբ և ներկայությամբ: Համերգին հրավիրված էին քույր Եկեղեցիների և հայ համայնքի, Հռոմի Պապի ներկայացուցիչը, մշակույթի գործիչներ: Պաշտոնական օթյակում պարոն նախագահը հատուկ հարգանք և պատիվ ընծայեց՝ իր կողքին տեղ տալով ՀՀ դեսպան տիկին Կարինե Ղազինյանին և ռումինահայ թեմի առաջնորդ Տիրայր Սրբազանին: Բեմ հրավիրվեց Ռումինիայի նախագահը, որն իր սրտի խոսքն ասաց այս զույգ տոների առիթով: Պարոն Իոն Իլիեսկուն մեծ հաճույքով և խոր իմացությամբ խոսեց հայ ժողովրդի մասին՝ վեր հանելով նրա մշակութային և հոգևոր արժեքները, ինչպես նաև դրանց թողած ազդեցությունը քաղաքակիրթ աշխարհի և մասնավորապես ռումինական մշակույթի վրա: Ելույթներ ունեցան նաև առաջնորդ Տիրայր Սրբազանը և տիկին Կարինե Ղազինյանը: Համերգին իրենց մասնակցությունը բերեցին հայոց առաջնորդարանի երգչախումբը, որին հաջորդեցին Կաթողիկե Եկեղեցու և Ռումինիայի Պատրիարքարանի երգչախմբերի ելույթները: Վերջինիս ղեկավարը՝ Դրըգոշին քահանան, որ վաղեմի բարեկամն է Տիրայր Սրբազանի, նրա պատվին երգեց «Շատ տարիներ»՝ ի գնահատումն ռումինահայոց թեմի առաջնորդի անմնացորդ և նվիրյալ ծառայության:

Համերգից հետո պալատի սրահում տեղի ունեցավ հատուկ ընդունելություն:

Հիշատակության արժանի փաստ է նաև այն, որ այս զույգ տոների առթիվ Տիրայր Սրբազանի մտածումով և միջնորդությամբ Ռումինիայում տպագրվեցին երկու նամակաժրարներ՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին և Սուչավայի հայկական եպիսկոպոսության հիմնադրման 600-ամյակին:

Ռումինիայում կան հայկական եկեղեցիներ և հայկական անուններով փողոցներ: Պետության որոշմամբ հայկական անուններ կրող փողոցների թիվը պետք է ավելանա: Բուխարեստի հայկական եկեղեցու մերձակա փողոցներից մեկը կոչվում է «Վազգեն Ա», իսկ Սուչավայում մեկ ուրիշ փողոց պետք է կոչվի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»:

Հանդիսությունները Բուխարեստում շարունակվելու են մինչև այս տարվա վերջը:

ՄԻՐԱՆ ՆԵՎՐՈՒԶՅԱՆ
Բուխարեստի հայ մշակույթի տան
պատասխանատու